ոսկւով, այլեւս արարին զընթրիս մեծ ճէնէռալին, և յետ ընթրեացն թագաւորն ետ յառաջ բերել զայն չորս ուղտսն ոսկւով ի տալ ճէնէրալին։ Իսկ ճէնէրալն որ ի յիւր թագաւորէն արգելեալ էր առնուլ զվարձս, վասն որոյ ասէ. Զի՞ են այդոքիկ, և չէ ինձ պիտոյ, զի ես գոհութիւն Ցեառն ունիմ զբաւական եկամուտս ի տեառնէ իմմէ թագաւորէս։

Բայց առ ի ոչ ահաճեցուցանելոյ զձեզ, զերկուան ի յղտոցս առցուք, և տացուք զօրացս և քահանայից մերոց, որք յոյժ աշխատ եղեն ի դառնութենէ ճանապարհին։ Եւ առեալ զերկուս ուղտսն զայնոսիկ ոսկւով, և բաժանեաց ուրախութեամբ զօրաց և քահանայից իւրոց։

Այլեւս ի զօրաց իւրոց և ի քահանայից կամեցան մնալ ի Կեօնտէր իրր հարիւր անձինք, և ճէնէրալն թոյլ ետ ի մնալ. և Սիմոն կամ Գլաւտիս թագաւորն հապէշու յոյժ սիրով և ուրախութեամբ ընկալաւ զնոսա, և մի ժամ հեռի ի Կեօնտէրէն ետ նոցա տեղի մի պատուական Ֆրեմոնայ կոչեցեալ, ուր կազմեցին իւրեանց տունս և բուրաստանս, և եկեղեցիս, և ամուսնացան ընդ դստերացն հապէշու, և սկսան բազմանալ։ Եւ զայս տեղիս նոցա ինքն Թովմաճանեան մահտեսի Ցովհաննէսն անձամբ գնացեալ տեսեալ է, թէ՝ պէտ բնակութիւն ոչ զոլով այժմ աւերեալ էին։ Եւ այն վերոյգրեալ լաթին քահանայն որ առ ի հովուել զեկեղեցիս նոցին մնաց ի պալատ թագաւորի, և գնացեալ առ թագաւորն Գլաւտիս և ասէ ցնա՝ թէ ես ընդ քահանայից իմոց չեմք բաւական հովուել զբոլոր քաղաքս, այժմ որ այս ճէնէրալն որ յետս դառնալոց է, առաքեսցուք ընդ նմա առ Բորթուկէզ թագաւորն Ցովհաննէս երրորդ, նախ թուղթս շնորհակալութեան ի կողմանէ քումմէ և ի բոլոր իշխանաց և ի ժողովրդոց քոց։ Այլեւս խնդրել միջնորդութեամբ Ցովհաննու թագաւորին Բորթուկիզաց ի Սրբազան Պապէն Հռոմայ զոմանս եկեղեցական արս իմաստունս, և զմի Պատրիարգ առ ի հովուել զքաղաքս։

Եւ թագաւորն Գլաւտիս արքայ՝ որդի թագաւորին հապէշու, յոյժ հաւանեցաւ ընդ այս խորհուրդ, և ետ գրել այն մեծապատիւ Քահանային լաթիներէն առ Ցովհաննէս թագաւորն և առ Պապն՝ թէ՝ վասն շնորհակալութեան և թէ՝ վասն խնդրուածոց եկեղեցական անձանց և թէ վասն Պատրիարգութեան։ Եւ ինքն թագաւորն Գլաւտիոս ստորագրեաց և ետ ի ձեռն այն օրհնեալ ճէնէրալին և մեծ հանդիսիւ թագաւորաւն և իշխանօք առաքեցին զճէնէրալն ընդ մնացեալ զօրաց իւրոց։

Եւ ի հասանելն ի Միւսէմպիկ քաղաք այն ճէնէրալն ընդ նաւուցն առաքեաց զնամակսն հապէշ թագաւորին առ Բորթուկէզ թագաւորն իւր Ցովհաննէս երրորդն։ Եւ յոյժ ուրախութեամբ ընկալաւ և ապա ինքն եւս Ցովհաննէս թագաւորն Բորթուկէզու գրեաց ի Հռովմ առ ԺԳ. Գրիգոր Պապն և առ սուրբն Իգնատիոս Լոյոլացի (որ ի նմին ժամանակի սկըսեալ էր նորապէս ծաղկիլ ի հիմնադրել զընկերութիւնն Ցիսուսեան կարգին) զի առաքեսցէ յիւրոց հոգեւոր որդւոց որպէս միսիոնար յԵթովպիա ի Հապէշաստան։

Եւ հասեալ ի Հռոմ նամակն Բորթուկէզ թագաւորին և ընդ նմին նամակն հապէշ թագաւորին առ Գրիգորիոս Պապն, և հրամանաւ ծայրագոյն Քահանայապետին Գրիգորիոսի յանձնեցաւ սրբոյն Իգնատիոսի առաքել ի հապէշ զերեքտասան անձինս և եւս գրեալ զպատասխանին հապէշ թագաւորին Գլաւտիոսի

Եւ նա յանձն առեալ պատրաստեաց զերեքտասան գիտուն անձինս, յորոց գմինն ձեռնադրեցին Պատրիարգ, և զերկուսն եպիսկոպոս օգնականս և յաջորդ պատրիարգին, և զայլ տասն կրօնաւոր ճիզվիթից իմաստուն քահանայս։

Եւ սուրբն Իգնատիոս յետ պատրաստելոյ զանձինս 1555 թուին, և փետրվարի 23ին գրեաց պատասխան առ Գլաւտիոյ թագաւորն հապէշից որ էր որդի Դաւթի թագաւորին, և ետ ի ձեռս իւրոց առաքելոց կրօնաւորացն։ Եւ առաքեաց զպատրիարգն և զերկուս եպիսկոպոսսն,